ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 03 » մայիսի 2017թ. № 034/02- 483

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ուղարկվում է Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 26-ի թիվ 124, ապրիլի 27-ի թիվ 125, թիվ 126, ապրիլի 28-ի թիվ 127 որոշումները:

Առդիր « 6 » թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ SAHAKYAN GAGIK 3707650340 Digitally signed by SAHAKYAN GAGIK 3707650340 DN: cn=SAHAKYAN GAGIK 3707650340, sn=••••, givenName=••••, c=AM, serialNumber=1d9d8e1aca12e Date: 2017.05.03 16:45:56 +04'00' Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2017թ. N⁰ 124 - Ա

ՄԱՆՈՒՇԱԿ ՌՈԲԵՐՏԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2017 թվականի ապրիլի 20-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով, որ Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան փող., թիվ 50 հասցեում գտնվող, 06-006 0136-0036 կադաստրային ծածկագրով, 0,205 հա մակերեսով հողամասում գտնվող 06-006 0136-0036-1 կադաստրային ծածկագրով, 207,90քմ մակերեսով ռեստորանին կից կառուցել է 19,34քմ մակերեսով ինքնակամ շինություն՝ բաց պատշգամբ՝ ***որոշում եմ.***

1. Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանին՝ սույն որոշման մասին սահմանված կարգով և ժամկետում իրազեկել Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ. (0-255) 2-25-00, Ֆաքս՝ (0-255) 2-25-97, էլ. փոստ՝ municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 27 >> ապրիլի 2017թ. № 125

ՄԱՆՈՒՇԱԿ ՌՈԲԵՐՏԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 16-րդ կետի << ա >> ենթակետով, 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, հաշվի առնելով, որ Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանին սեփականության իրավունքով պատկանող Սուրեն Ավետիսյան փողոց, թիվ 50 հասցեում գտնվող 06-006-0136-0036 կադաստրային ծածկագրով 0,2050 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասի վրա 1991 թվականին օրինական կառուցված 223,27 քառակուսի մետր մակերեսով ռեստորանին կից ինքնակամ կառուցված 19,34 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով <<Արտյոմ Սաքանյան>> Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ եզրակացությունը և Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանի ներկայացուցիչ Ռոբերտ Ղազարյանի դիմումը, ***որոշում եմ***.

1. Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանին (ծնված 18.04.1981թ.) սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ քաղաքի Սուրեն Ավետիսյան փողոց, թիվ 50 հասցեում գտնվող 06-006-0136-0036 կադաստրային ծածկագրով 0,2050 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասի

վրա գտնվող 223,27 քառակուսի մետր մակերեսով ռեստորանին կից ինքնակամ կառուցված 19,34 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Մանուշակ Ռոբերտի Ռուշանյանին՝ համայնքի բյուջե վճարել 33 265 ՀՀ դրամ օրինականացման վճար:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ:

6. Մ.Ռուշանյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 27

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 27 >> ապրիլի 2017թ. № 126

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԵՆ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՏՐՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 296 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի << բ >> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման >> կարգի 34.2-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 24-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2016 թվականի ապրիլի 27-ի թիվ 27042016-06-0028 վկայականը և Կ.Մաթոսյանի դիմումը, ***որոշում եմ.***

1. Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող Ս.Ավետիսյան փողոց, թիվ 15/1 հասցեում գտնվող 06-006-0019-0132 կադաստրային ծածկագրով 0,0056 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և 48,2 քառակուսի մետր մակերեսով հարթակը վարձակալության իրավունքով, 99 տարի ժամկետով, 15 000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով տրամադրել Կարեն Սամվելի Մաթոսյանին (ծնված 20.12.1974թ.):

2. Կ.Մաթոսյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գ.Զոբանյանին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հ.Միրզոյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 296 որոշումը:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2016թ. ապրիլի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » ապրիլի 2017թ. № 127 - Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչ Գագիկ Ռաֆիկի Մելիքյանի դիմումը և Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 97 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 28-ի թիվ 3 արձանագրությունը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի 2017 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Գագիկ Մելիքյանին (անձնագիր՝ AH0358936, տրված 28.03.2007թ., 052-ի կողմից, սոցիալական քարտ՝ 1211660036) հատկացնել դրամական օգնություն՝ 80 000 ՀՀ դրամ՝ Սիրվարդ Բունիաթյանի հուղարկավորության ծախսերը հոգալու համար:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 28
ք.Սպիտակ